



Հետազոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության թեմա 	<p>Համագործակցային մեթոդները որպես ֆինիա առարկայի նկատմամբ մոտիվացիայի բարձրացման միջոց</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Լուիզա Աղաբաբյան Վիտալիի Քիմիայի ուսուցչուհի 098 60 99 14 luiza.aghaqaryan@gmail.com Բնագիտություն, ֆինիա 5, 7, 8, 9, 10, 11, 12-րդ դասարաններ</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե 	<p>Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց geghashen@schools.am</p>

Բովանդակություն

Ներածություն

1. Համագործակցային մեթոդները որպես ֆինիա առարկայի նկատմամբ մոտիվացիայի բարձրացման միջոց----- 5 **4**

Եզրակացություններ,

առաջարկություններ-----

24 **5**

Օգտագործված գրականության ցանկ----- **256**

Հավելվածներ **7**

Ներածություն

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին համապատասխան անհրաժեշտ են նոր ուսումնական չափանիշներ: Ժամանակակից Ուսուցիչը առանց ուսումնական պրոցեսում լրացուցիչ մեթոդական և մանկավարժական գրականության, ինչպես նաև ժամանակակից ինտե՛լակտիվ համակարգչային տեխնոլոգիաների չի կարող յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել կրթական համապատասխան մակարդակ: Կրթության բովանդակության ներգրավման միտումը արտացոլում է բազմամակարդակ կապերի (մարդ – հասարակություն– բնություն) ամբողջականությունը: Դրա արդյունքում կարգավորվում է այդ համակարգի առանձին բաղադրիչների գործառնությոը և իմացական Օբյեկտի ամբողջականությունը: Ինչպես Օրինակ՝ կանոնակարգված համակարգերի հաղթահարում, ինչպես նաև բնական երևույթների տարանջատված մակարդակներից խնուսվում (կենսաբանական, ֆիզիկական, ֆիզիկական, աշխարհագրական): Ինտեգրացիոն մոտեցման կիրակետն է հանդիսանում՝ բացահայտել արտաքին միջավայրի կապերը անՕրգանական համակարգերի ուսմանսիրման միջոցով: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի Օրինակներ: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Դպրոցում են ձևավորվում ապագա ֆալսեթոկ կարողությունները, հմտությունները, ունակություններն ու աշխարհայացքը: Ինտեգրված դասերը ժամանակակից համագործակցային ուսուցման մեթոդների նորություններից մեկն են: Դպրոցական տարիները պետք է ուղեկցվեն զարմանքի, հիացմունքի, ակտիվ հետազոտման երջանիկ պահերով, նորի բացահայտումներով, գեղեցիկի և վեհի հետ հանդիպումով մետաբանաչոյության զարգացմամբ: Արդի ժամանակաբաժանի ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով, որը որոշակիորեն կարգավորված

գործունեություն է՝ մանակավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված:

Քիմիայի դասընթացն ունի խնդրահարույց բազմաթիվօբյեկտիվ բարդություններ, հետևաբար առանց առարկայի նկատմամբ հետաքրքրասիրություն, սովորելու ցանկություն առաջացնելու հնարավոր չէ ուսումնասիրել այն: Ինտեգրման միջառարկայական կապեր ստեղծելու խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումն է:

1. Համագործակցային մեթոդները որպես ֆիմիա առարկայի նկատմամբ մոտիվացիայի բարձրացման միջոց

Ուսուցման մեթոդները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչն, իր ուսումնական գործունեության ընթացքում, իրենից անկախ, կիրառում է այնպիսի մեթոդներ ու

հնարներ, որոնք նույնիսկ, մանկավարժության հայտնի չեն: Դա, անհուշտ, կախում ունի նաև ուսուցչի իմպրովիզացիայից և ռեֆլեքսիայից, բազմաճյուղից և գործողություններից, որ նա ծավալում է դասերի ֆակուլտատիվ պարամունքների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների ընթացքում:

Պարզ ու հասկանալի է, որ այդ բոլոր բնագավառներում հարստանում է նրա մանկավարժական փորձը: Վերջինս հարստանում է նաև ուսուցման գործընթացը կազմակերպող դիդակտիկական նոր համակարգերը գործադրելիս: Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես աշակերտի գործունեության եղանակ: Այլ կերպ ասած, մեթոդը փոխադրելի է, փոխգործողության եղանակ է, ուսուցչի և աշակերտի աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում: Կարելի է ասել՝ մեթոդը ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակն է: Միաժամանակ՝ սովորողների գիտական աշխարհայացքը ձևավորելու, նրանց ընդունակություններն ու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու եղանակ:

Մեթոդը հասկացվում է նաև լայն իմաստով: Օրինակ՝ դիդակտիկական, մատերիալիստական մեթոդը այն հիմնական ուղին է, որը տալիս է բոլոր մեթոդները պրակտիկայում կիրառելու հնարավորություն: Դիդակտիկական մատերիալիստական մեթոդը մեթոդաբանական հիմք է բոլոր մեթոդների համար: Այդ մեթոդը կոչվում է նաև հանաչողական, քանի որ այն ուղղություն է տալիս անձի մտածողությանը:

Մեթոդ նշանակում է նպատակին հասնելու եղանակ, որոշակի ձևով կարգավորված գործունեություն: Ուսուցման մեթոդ են անվանվում ուսուցչի և սովորողների կարգավորված փոխկապակցված գործունեության եղանակը, գործունեությունն որն ուղղված է ուսուցման պրոցեսում կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրների լուծմանը: Ուսուցման մեթոդները ուսումնական պրոցեսի կարևորագույն բաղադրիչներից մեկն են: Առանց գործունեության համապատասխան մեթոդների անհնարին է իրականացնել ուսուցման նպատակներն ու խնդիրները, հասնել աշակերտների կողմից ուսումնական նյութի որոշակի բովանդակության յուրացման:

«Մեթոդ» հասկացությունը, ինչպես հայտնի է, կիրառվում է ամենից առաջ լայն համամեթոդաբանական առումով, երբ խոսվում է դիդակտիկական մատերիալիզմի մեթոդի մասին, որը հակադրվում է իրականության իմացության իդեալիստական, մետաֆիզիկական մեթոդին: Միայն դիդակտիկամատերիալիստական մեթոդն է մարդկային գործունեության մյուս բոլոր մեթոդների, մասնավորապես ուսուցման մեթոդների օբյեկտիվ նկարագրության և գործնականում արդյունավետ կիրառության հիրավի գիտական հիմունքը: Ուսուցման գործընթացում, բացի մեթոդից, կիրառվում է նաև հնարը, որը ուսուցման մեթոդի բաղկացուցիչ մասն է, նրա մի կողմը, տարրը: Յուրաքանչյուր մեթոդում կարելի է առանձնացնել բազմաթիվ հնարներ: Ուրեմն, մեթոդը՝ հնարների միագումար ամբողջությունն է: Ուսուցման գործընթացում մեթոդին կարող է փոխարինել հնարը, հնարին՝ մեթոդը: Դա կախում ունի

ուսումնասիրվող նյութի բովանդակությունից, տրամաբանությունից, սովորելուների ուսումնական ու տարիքային հնարավորություններից և այլ հանգամանքներից: Ուսուցման մեթոդների ու հնարների հիմնական խնդիրն է միասնաբար լուծել սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները:[5, 63-65]

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք փոխելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մտածելակերպում է ֆենոլոգիական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավար խոսքի կարողությունները:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:

Այս մեթոդի կիրառման հիմնական ֆայլերն են՝

- ա) առաջադրանքի սահմանումը,
- բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,
- գ) սվյալներ և տեղեկություններ ստանալու մասշեղիությունը (որտեղ),
- դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,
- ե) սինթեզը,
- զ) գնահատումը:

Համագործակցային ֆենոլոգիական աշակերտների հաղորդակցման և հարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):[2, 10-15]

Այս եղանակի փուլերն են՝

- ա) ֆենոլոգիանը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում:Այդ հայտարարությունները փակցված են սենյակի տարբեր մասերում.

բ) յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.

գ) ֆենարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը կողմ փաստարկները ներկայացնելու համար.

դ) փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին. ե) խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված «ֆենարկման խաղանիշեր» (3-6 հատ՝ կախված ֆենարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից):

զ) խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես խաղանիշեր են ստանում: Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին ֆենարկման մեջ ներգրավվելու նպատակով: Որպես այլընտրանք, խմբի անդամներն իրենց խաղանիշերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպասել է իր բոլոր խաղանիշերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի.

է) Իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր խաղանիշերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Խաղանիշերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ խաղանիշ է: Այս եղանակն օգտագործելով՝ ուսուցիչը ոչ միայն կառավարում է ֆենարկման ժամանակը, այլև աշակերտներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

Ուսումնական խմբի անդամների միջև փոխադրություն կազմակերպելու գաղափարը ներդրվել է մի շարք մանկավարժական ուղղություններում, որոնք պատմականորեն կայացել, առանձնացվել ու մանկավարժության մեջ ամրագրվել են որպես յուրատեսակ մանկավարժական ավանդույթներ: Դրանց թվին են պատկանում այնպիսի հայտնի ուղղություններ, ինչպիսիք են.

Բել-Լանկաստերյան համակարգը. - Դեռ XVIII դարի վերջերից սկիզբ առած, հետագայում լայն տարածում գտած մեթոդներից է: Ուսումնական պարապմունքների կազմակերպման հիմնական սխեման հետևյալն է. ուսուցիչն ուսումնական խմբի անդամներից ընտրում է մի ֆանի ընդունակ աշակերտների և հիմնականում աշխատում նրանց հետ: Ընտրված աշակերտներից յուրաքանչյուրին կցվում է աշակերտական փոքրաբանակ խումբ, որտեղ նրանք կատարում են ուսուցչի դերը: Այս ձևը հնարավորություն է տալիս մի կողմից՝ որոշ չափով հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ լուծել մանկավարժական կարգերի պակասի պրոբլեմը:

Բրիգադային մեթոդը. - XX դարի առաջին կեսին լայն տարածում գտած մոտեցումներից է: Ուսումնական խումբը բաժանվում է փոքր ենթա-խմբերի՝ բրիգադների: Յուրաքանչյուր բրիգադում փոխօգնության և համագործակցության միջոցով իրագործվում են ուսումնական նպատակները, իսկ յուրաքանչյուր աշակերտի արդյունքը գնահատվում է ընդհանուր բրիգադի ցուցանիշներով:

Բիվինյան երկխոսութենական գուգորությունների մեթոդը. - Արդեն XX դարասկզբին որոշ մանկավարժներ ուսումնական պարապմունքներ կազմակերպելիս սկսեցին օգտագործել աշակերտների՝ գույգերով

հաղորդակցման ձևերը: Այս նորամուծության հիմնադիրն ու հիմնական կիրառողը Ա.Ռիվինն էր: Նրա կազմակերպած պարապմունքներն առաջին հայացքից բավական պարզ էին:[3, 20–26]

Սովորողներից յուրաքանչյուրն իր ուսումնական նյութը յուրացնելու համար աշխատում էր դասընկերներից մեկի հետ: Որոշ ժամանակ համատեղ աշխատելուց հետո նա այդ դասընկերոջից բաժանվում էր, մտենում մեկ այլ աշակերտի և սկսում աշխատել նրա հետ: Հաղորդակցվելով գույզերով՝ մեկը մյուսի հետ, աշակերտները կատարում էին տարբեր աշխատանքներ՝ իրար բացատրում էին նոր թեմաները, համատեղ լուծում խնդիրներ, ֆենարիում տարբեր հարցեր, մեկը ստուգում էր մյուսի՝ նյութի յուրացման մակարդակը և այլն: Սակայն արտաֆնապես պարզ թվացող այսպիսի պարապմունքներն ունեին իրենց ներքին սրամաքանությունը, Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը նպատակաուղղվածությունը և կազմակերպվածությունը: Հետագայում Ռիվինի հայտնագործությունները զարգացվեցին ու կիրառվեցին իր աշակերտների ու հետնորդների կողմից: Շարժման ներկայացուցիչների (Ռիվին, Վիլսոն, Բրեյտերման, Կուլենիկով և ուրիշներ) մտքով անգամ չէր անցնում, որ իրենց հայտնագործությունները ոչ միայն սովորական մանկավարժական հնարքներ են, այլև կարող են հիմք հանդիսանալ ընդհանրապես ուսուցման կազմակերպման նոր եղանակի անցման համար:

Մյուս՝ մեզ հայտնի մանկավարժական տեխնոլոգիան համագործակցության մանկավարժական տեխնոլոգիան է:

Այս տեխնոլոգիայի համար հիմք են հանդիսացել ամերիկացի հոգեբան և մանկավարժ Ջոն Դյուիի, ուսուցիչ հոգեբան Լև Վիգոտսկու և շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեի աշխատությունները:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական փուլերի

1. ուսումնական նյութի նախապատրաստում
2. աշակերտների նախապատրաստում համատեղ աշխատանքին
3. բուն ուսումնական աշխատանքի ընթացքը[4, 70–74]

Իմ կարծիքով սա այն տեխնոլոգիաներից է, որի ներդրումը ներառական կրթության կարևոր պայման է հանդիսանում: Քանի որ ներառական կրթության ամբողջ նպատակը կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների ներգրավելն է ուսուցման գործընթացին և բացի այդ ինտեգրելը կուլեկտիվում՝ առանց որևէ խտրականության: Իսկ այս տեխնոլոգիան հենց ինքը մի միջոց է, այս նպատակը իրականացնելու համար, քանի որ ինչպես նշվեց այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է համագործակցային, կուլեկտիվ աշխատանքի ձևը և սա մի միջոց է որով կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները կարող են համատեղ աշխատել մյուս աշակերտների հետ: Դա կարող է իրականացվել թե գույզերով և թե խմբակային աշխատանքի ձևով: Սա կնպաստի նրան, որ թույլ կարողություններով երեխան կաշխատի և կհամագործակցի առավել բարձր կարողություններով աշակերտի հետ և աջակցություն կստանա վերջինիս կողմից: Հայտնի է, որ

խմբակային կամ գույգերով աշխատանքը ավելի է մտերմացնում աշակերտներին, այսինքն՝ դա նպաստում է, որ կրթության հատուկ կարիք ունեցող երեխաները իրենց զգան կալեկտիվի մի մաս և ունենան իրենց ուրախ դերը: Այս ամենը առավել լավ պատկերացնելու համար տեսնենք, թե իրականում այս տեխնոլոգիան ինչպես է կիրառվում ուսուցման գործընթացում.

Ուսումնական նյութի նախապատրաստական փուլում կատարվում է

- ուսումնական նյութի ընտրություն, դրա բաժանում տրամաբանական հատվածների
- լրացուցիչ նյութի ընտրություն
- թիմային աշխատանքի տեսակի ընտրություն

Աշակերտների նախապատրաստումը համատեղ աշխատանք կատարելու կարողությունների ձևավորման փուլում կատարվում է

- Ուրիշին լսելու կարողությունների ձևավորում
- Ուրիշի տեսակետի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձևավորում
- Սեփական կարծիք արտահայտելու և այն հիմնավորելու կարողությունների ձևավորում
- Անհրաժեշտ ինֆորմացիա հայթայթելու կարողությունների ձևավորում
- Մտապատկերը խոսքի միջոցով արտահայտելու և բանավոր խոսքը մտապատկեր դարձնելու կարողությունների ձևավորում

- Վերլուծություն և համագործունեություն կատարելու կարողությունների ձևավորում
- Եզրահանգումներ կարատելու կարողությունների ձևավորում և այլն

Բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպվել

- Փոխադարձ ուսուցում ուսուցիչ — աշակերտ դեբատային խաղի տեսքով
- Զույգերով մտքերի փոխանակման, լրացուցիչ տեղեկատվության որոնման տեսքով
- Փոքր և մեծ խմբերով յուրացման և որոնողական աշխատանք կազմակերպելու միջոցով

Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է

- Ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ ավելի լավ է յուրացվում և մտապահվում ուսումնական նյութը
- Տրամաբանական մտածողության զարգացմանը
- Խթանում է ուսման բարձր քանակաչափի գրգռվածությունների ձևավորմանը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան իմաստավորվում է համատեղ գործունեության և կալեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, գույգերով երկխոսությունը, աշակերտների գույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը:

Ուսուցման ողջ գործընթացը հիմնված է համագործակցային ուսուցման եղանակի վրա:

Համագործակցային ուսուցման տարրերը.

- ☛ դրական փոխկախիվածության ապահովում.
- ☛ դեմ առ դեմ փոխազդեցություն.
- ☛ անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- ☛ միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- ☛ խմբային գործընթացի մշակում.
- ☛ փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում:[3, 74-78]

Ուսուցման մեթոդների դասակարգման վերաբերյալ շատ հաճախ են կիրառվում մոտեցումներ միաժամանակ ըստ գիտելիքների աղբյուրների ու տրամաբանական հիմնավորման, ըստ գիտելիքների աղբյուրների և ուսումնական գործունեության մեջ աշակերտների ինֆորմացիայի մակարդակի: Վ. Ֆ. Պալամարչուկը և Վ. Ի. Պալամարչուկը առաջարկել են ուսուցման մեթոդների այնպիսի մոդել, որի մեջ միասնական մեջ գուգակցվում են գիտելիքների աղբյուրները, աշակերտների իմացական ակտիվության ու ինֆորմացիայի մակարդակը, ինչպես նաև ուսումնական իմացության տրամաբանական ուղին: Այն դասակարգումը, որի մեջ բնակարկվում են մեթոդների չորս կողմերը՝ տրամաբանական-բովանդակային, ըստ աղբյուրների, պրոցեսուալ և կազմակերպչական-կառավարչական, առաջարկել է Ս. Գ. Շպոլակենկոն: Մեթոդների դասակարգման պրոբլեմի նկատմամբ տարբեր տեսակետների առկայությունը արտացոլում է նրանց մասին գիտելիքների շերտավորման և ինտեգրացման բնական պրոցեսները: Առավել հստակորեն է արտահայտվում նրանց էության բնութագրման նկատմամբ բազմակողմանի, կոմպլեքսային մոտեցումը: Արդի պայմաններում հասունացել են ուսուցման մեթոդների վերաբերյալ պատկերացումների ընդհանրացման ու համակարգման հնարավորությունները՝ գործունեության նկատմամբ ամբողջական մոտեցման մեթոդաբանության հիման վրա: Մեթոդներն ըստ հաղորդման աղբյուրների և ինֆորմացիայի ըմբռնման բնույթի բաժանում են՝ խոսքային, գրականի և գործնականի: Ուսուցման տվյալ փուլում իրականացվող հիմնական դիդակտիկական խնդիրներից կախված՝ մեթոդները բաժանվում են գիտելիքների ձեռք բերման, կարողությունների և հմտությունների ձևավորման, գիտելիքների կրթման, ստեղծագործական գործունեության, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրակալման և ստուգման մեթոդների:

Ուսուցման ժամանակակից մեթոդների հիմքում ուսուցման գործընթացում սովորողի ինֆորմացիայի ինֆորմացիայի ներառման, անմիջական, ակտիվ մասնակցությունը այդ գործընթացին: Համագործակցային ուսուցման ժամանակ սովորողը պասիվ ընկալողից վերաճում է հայտնագործողի, հետազոտողի, հետաքրքրասերի:

Այս տիպի աշխատանքը սովորողին պասսիվ օբյեկտից վերածում է ակտիվ, աշխատող սուբյեկտի, որի ընթացքում խթանվում են՝ ինֆորմացիայի, նախաձեռնությունը և հետազոտելու կարողությունը:

Համագործակցային ուսուցման այլընտրանքային եղանակը մշակել են մի շարք ուսուցիչներ: Ուսուցման պրոցեսում աշակերտները հանդես են գալիս ոչ միայն սովորողի, այլև սովորեցնողի դերում:

Իրենց յուրացրած նյութերն առկերտները պատմում են ընկերներին, համատեղ ֆինանսավում, հարկ եղած դեպքում՝ նույնիսկ բանավիճում: «Սովորեցրու, որ սովորես» սկզբունքի արդյունավետության մասին խոսում են շատ մանկավարժներ:[2, 36-38]

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ուսումնասիրության նպատակն է համագործակցային մեթոդների կիրառումը ֆինիայի դասերին: Հարց: Արդյո՞ք կարող են համագործակցային մեթոդները բարձրացնեն ֆինիա առարկայի մոտիվացիան:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	լեզվական գրագիտություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /ֆանակ, սեռային բաշխում/	10-րդ դասարան Տղա՝ 12 Աղջիկ՝ 13
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ ֆանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	որակական հետազոտություն
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	Սեպտեմբեր 2023 թ.

Հիմնական բովանդակություն

<p>Գրականության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <p><u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u></p>	<p>Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինֆնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում է ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինֆնուրայն հանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Այս ինտերակտիվ մեթոդների շնորհիվ սովորողները հաճույքով են սովորում, ակտիվորեն են մասնակցում դասին և ավելի հեշտ են յուրացնում ինչպես կրտսեր, այնպես էլ միջին և ավագ դպրոցներում: [1, 24-25]</p>
<p>Հետազոտության ընթացքը</p>	<p>Նմանօրինակ իմ դասի նպատակները և խնդիրները՝</p> <ul style="list-style-type: none"> • Սովորողների պրակտիկ գործունեության փորձի ձեռք բերում ուսումնասետագոտական եղանակով: • օրգանիզմի վրա հալոգենների կենսաբանական նշանակության դիտարկում, • պատմաաշխարհագրական փաստերի բննարկում աշակերտների մոտ բիմիական հետազոտության կարողության և հմտության ձևավորում • հայոց լեզու, կենսաբանություն, ֆիզիկա, մաթեմատիկա առարկաների միջև միջառարկայական կապի ստեղծում

Համագործակցային ուսուցման <<Թելեն- Շարանի>> խմբային հետազոտություն մեթոդի կազմակերպումը՝ նշելով ընթացքի փուլերը և նկարագրությունը

«Քիմիայի» դասավանդումը պետք է ապահովի հարուստ և հետաքրքիր փորձառություն՝ ձևավորված ֆիմիայի հիմնական գաղափարների, բնագիտության և նարտագիտության պրակտիկաների, ընդհանրական խաչվող հասկացությունների և հանրակրթության հիմնական ու միջնակարգ ծրագրերի շրջանավարտներից ակնկալվող վերջնարդյունքների շուրջ: Վերոնշյալ փուլերով անցնելիս ուսուցիչը պետք է կատարի հետևյալ աշխատանքները՝

Նախադասարանական աշխատանք — Հետազոտող

«Մայր» խմբերի ձևավորումը 10-րդ դասարանում՝ 25 աշակերտ: Նախորդ դասին աշակերտներին բաժանվել էր գունավոր քվային ֆարսեր՝ 1,2,3 քվերով (կարմիր, կապույտ, ծիրանագույն (հայկական դրոշակի գույները)):

Դասարանը նախապես բաժանվել էր 3 խմբի (1111, 2222, 3333), որոնք կազմված էին 4 անդամներից այնպես, որ յուրաքանչյուր խմբում ընդգրկված լիներ մեկ կամ երկու ակտիվ աշակերտ, որպեսզի բոլոր խմբերի ուժերը հավասարազոր լինեին: Աշակերտներն իրենց նախընտրությամբ ընտրել էին խմբերի ավագներ (հետազոտողներ), ովքեր պիտի համակարգեին և ներկայացնեին իրենց խմբերի աշխատանքները:

Այնուհետև վիճակահանությամբ ընտրվեցին խմբերի անուններ՝ համապատասխանեցնելով հալոգենների անվանումների հետ՝ 1. Ֆտոր, 2. Քլոր, 3. Բրոմ:

Աշակերտները ստացել էին հանձնարարություն՝ այլ աղբյուրներից հետազոտել, մշակել և դուրս բերել տեղեկատվություն յուրաքանչյուրը իր խումբը




ներկայացնող հալոգենի մասին և ցույց տալ միջառարկայական կապերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկերտները նախորդ տարում՝ 9-րդ դասարանում, արդեն ծանոթացել էին հալոգեններին և նրանց միացությունների կիրառման բանգավառներին: Նյութի ընտությունը պիտի կատարելին ինֆուրույն, ներկայացման եղանակը ևս իրենք էին ընտրելու (օր. (տեսասահիկ) սահիկահանդես, գեկուցում կամ այլ եղանակ) և իրականացնելու համագործակցային ուսուցում <<Թելեն- Շարանի>> խմբային հետազոտություն մերոյով:


Առխատանքը իրականացնելու համար տրվում է մեկ շաբաթ: Մեկ շաբաթվա ընթացքում ուսուցչուհին հետևում, շտկում, ուղղումներ կամ լրացուցիչ ցուցումներ էր տալիս հետազոտողներին, որպեսզի նրանք խմբի անդամներին ճիշտ ուղղորդելին: Նշված առխատանքի համար հանձնարարվել էր մեկ շաբաթ: Այդ ընթացքում խմբերը կարող են պատրաստել պատի թերթեր, գրել շարադրություններ կամ ռեֆերատներ՝ իրենց հանձնարարված թեմաներից: Հատկապես պետք էր պահպանել կապը հալոգենիդների և կենդանի օրգանիզմներում դրանց ունեցած ազդեցությունների հետ:

Քայլ առաջին -Առկերտները ներկայացնում են իրենց կատարած առխատանքները: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կազմած պատույն, ռեֆերատները կամ հետաքրքիր այլ տեղեկություններ տեսասահիկների միջոցով: Նշված տեղեկություններից որոշներ, որոնք ավելի հատկանշական էին, կկցենք դասի պլանին՝ ստորև ներայացվելիք հետաքրքիր տեղեկություններ մեջ: Այս փուլում (2 դասաժամ) յուրաքանչյուր խմբի հատկացվում է 15 րոպե, ընդհանուր առմամբ չորս խմբի անհրաժեշտ է

մոտ 60 բույե: Առակերտների և ներկա ուսուցիչների կողմից ընտրվում են լավագույն հետազոտական աշխատանքները, և խրախուսվում են բոլոր խմբերի աշխատանքները: Նշենք, որ այս ընթացքում հենց առակերտներն էին պահպանել միջառարկայական կապեր՝ համադրելով ֆիմիան, կենսաբանության (կենդանի օրգանիզմների վրա տարբեր հալոգենիդների ունեցած ազդեցությամբ), աշխարհագրության (թե ո՞ր հալոգենը առաջին անգամ ո՞ր աշխարհամասում էր հայտնաբերվել, և որտեղ էին ամենաշատը տարածված), պատմության՝ (ներկայացվեցին հալոգենների հայտնաբերման տարեթվերը): Կիրառվեց նաև առակերտների գեղագիտական դաստիարակության տարրեր՝ գեղեցիկի մեջ տեսնելով հալոգենների ու դրանց առաջացրած միացությունների ներկայացման յուրահատուկ ձև՝ պաստառների պատրաստում, տեսասահիկների կազմում և ցուցադրում: Սա ևս միջառարկայական կապի պահպանման տեսակ է ֆիմիա - գրականություն - ինֆորմատիկա առարկաների միջև:

Քալ էրկրոք - Հաջորդ փուլի համար յուրաքանչյուր խմբին տրվում է ֆարսային աշխատանք և 4-5 բույե ժամանակ: Կազմեք ռեակցիաների հավասարումները, որոնց օգնությամբ հնարավոր է իրականացնել հետևյալ փոխարկումները:





Հավասարումները կազմելուց հետո թերթիկները հանձնում են ուսուցչուհուն, իսկ խմբերից ընտրված մեկական աշակերտ-խոսնակ-հետազոտող՝ որին ընտրում են կամ խմբի անդամները կամ ուսուցչուհին ներկայացնում է իրենց խմբի աշխատանքը, գրում է փախարկումների լուծումները գրատախտակին և նստում, ստուգում են հարակից խմբերի աշակերտները միմյանց և գնահատում հակադիր խմբերին: Աշխատանքը տևում է 16 րոպե:

Քալի երրորդ - Աշակերտներին հանձնարարվում են խնդիրներ, առաջին և երեսուրդ խումբը գրում է խնդրի լուծումը գրատախտակին և կատարում նախատեսված փորձը: Խնդրի լուծման և փորձի իրականացման համար տրվում է 8 րոպե ժամանակ: Խնդիր 1- 2 Ֆիզիոլոգիական լուծույթի պատրաստում
 Տրված է 3 գրամ (5 գրամ) կերակրի աղ: Քանի՞ գրամ ջուր է անհրաժեշտ ավելացնել, որպեսզի ստանալ ֆիզիոլոգիական լուծույթ:

Խնդիր 3 - 4 Հիպերտոնիկ լուծույթի պատրաստում
 Տրված է 15 գրամ (20 գրամ) կերակրի աղ: Քանի՞ մլ ջուր է անհրաժեշտ ավելացնել, որպեսզի ստանալ հիպերտոնիկ լուծույթ:

Քալի չորրորդ - Կատարել գնահատում, ինքնագնահատում, տնային աշխատանքների հանձնարարում, անդրադարձ և ամփոփում: Հատկացվում է 6 րոպե ժամանակ: Այս դասընթացների ընթացքում երեք աշակերտներ բարելավեցին իրենց գնահատականները:

Այսպիսով ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականացնում է ուսուցման

տարաբնույթ մեթոդներով, որը որոշակիորեն կարգավորված գործունեության է՝ մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված: Այժմ խիստ կարևորվում է, ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները: Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց միջառարկայական կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը, աշակերտների մոտ մետահանաչափության զարգացումն է: Ժամանակակից աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկավորությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը, մեղիագրագիտությունը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ անբողջությամբ՝ սխալ: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են փառաբանող գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար:

<<Թելեն- Շարանի>> խմբային հետազոտության մեթոդով համագործակցային ուսուցման կիրառման ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի թեմայի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում դասընկերներին, ովքեր միասին փոխհամաձայնեցված ուսուցում են իրականացնում մետահանաչափության կտրուկ ասպեկտներից անցում կատարելով աստիճանական

գիտական զարգացման էտապավորումների (տես՝ Ն. Հոբոսյան, Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումը ֆինիլայի դասավանդման գործընթացում, Երևան 2010, էջ 9)։ Այս տիպի խմբային աշխատանք իրականացնելուց առաջ ստուգվում է նույն թեմայից երեխաների առաջադիմությունը և որակը նախօրոք՝ ավանդական մեթոդ կիրառելով, երբ սովորողները դասանյութը սովորում են միայն դասագրքից՝ չօգտվելով համացանցից և գիտահանրամատչելի գրականությունից։ Ես իմ դասընթացի ժամանակ դիտարկեցի այս կերպ դասի հարցում մեթոդի արդյունավետությունը բացահայտելու և բոլոր անհասկանալի նոանսները բացահայտելու համար։

<<Թե՛լեն - Շարանի>> խմբային հետազոտություն մեթոդով համագործակցային ուսուցում իրականացնելիս աշակերտներին ավեցի նյութը հետազոտել մեկ շաբաթվա ընթացքում՝ կիրառելով իրենց ողջ ներուժը՝ սպասված արդյունքին հասնելու համար։ Ողջ հետազոտության ընթացքում վերահսկել եմ, ուղղորդել նրանց։ Աշակերտներս ձեռք բերեցին ստեղծագործական ինֆորմալյունություն, որը մեծ ձեռքբերում էր։ Թե՛ման հետազոտելիս ոգևորված էին և զարմացած բնագիտամաթեմատիկական առարկաների փոխկապակցվածությամբ ֆինիլա առարկայի հետ։

Հետազոտության ավարտից հետո ստեղծագործական ինֆորմալյունությունը, որը մեծ ձեռքբերում էր, աշակերտների գիտելիքների ստուգման արդյունքում կատարված վերլուծությունից երևում է, որ դասավանդման տվյալ մոդելի կիրառման դեպքում խորացան իմ աշակերտների գիտելիքները բնագիտական առարկաներից, իսկ որոշ աշակերտներ իրենց գնահատականները բարելավեցին՝ ելնելով մետահանաչադությունից,

	մյուսներն էլ իրենց եղած գնահատականները պահպանեցին:

Եզրակացություններ, առաջարկություններ

<<Թեկեն- Շարանի>> խմբային հետազոտության մեթոդով համագործակցային ուսուցում կիրառելիս աշակերտները կարողացան միջառարկայական կապեր ստեղծել՝ բացահայտելով իրենց համար ֆիմիայի դասժամերի բազմակողմանի նշանակությունը: Քիմիան դասավանդել առանց բնագիտության մյուս հյուղերի՝ ահնար է, ուստի գրեթե բոլոր դասժամերիներին, ես ստեղծում եմ միջառարկայական կապեր՝ հիմնականում ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության, մաթեմատիկայի, երբեմն նաև լեզուների, ինֆորմատիկայի միջև: Հանրակրթական դպրոցում դասավանդվող առարկաների ուսումնասիրման ընթացքում միջառարկայական կապերի կիրառման անհրաժեշտությունը գործնական մանկավարժության դժվար խնդիրներից մեկն է: Քիմիան բնագիտական առարկաների շարքում ունի հանգուցային նշանակություն, քանի որ այն կապող օղակ է հանդիսանում ֆիզիկայի և կենսաբանության միջև:

Ի՞նչ պարզվեց հետազոտության արդյունքում.

- Դասավանդման ընթացքում կազմակերպումը՝ տարաբնույթ մեղիագիտական ֆայլերի հաջորդականությամբ, <<Թեկեն - Շարանի>> խմբային հետազոտություն մեթոդով համագործակցային ուսուցման կիրառման ժամանակ սովորողների մոտ խորամուխ եղավ վստիհամաձայնեցված ուսուցման, որը առաջ բերեց մետահանաչողական կարողությունների կտրուկ ան ապեկաններից անցում կատարելով աստիճանական գիտական զարգացման էտապավորումների:
- Մեթոդի կիրառումից հետո անպայման կազմակերպել ֆննարկում՝ հարց ու պատասխանի, ընդ որում ընթացքում պետք է ապահովել ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ վստիագրության բարձր մակարդակ:

Վերահանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտության շնորհիվ ձեռք բերված արդյունքները. <ul style="list-style-type: none"> • Աշակերտների մոտ ձևավորվեցին հետազոտողի իմացություն, միմյանց հետ ազատ հաղորդակցվելու կարողություն, դասընկերոջ հետ աշխատելու հմտություններ:
--	---

	<ul style="list-style-type: none"> • Մեծացավ առակերտների փոխվստահությունը միմյանց նկատմամբ և ընթացքում ֆինիայի դասապրոցեսին նրանց ներգրավվածության աստիճանը:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Դասավանդման մեթոդիկա: Ուսուցման արդյունավետ հնարներ: Ֆրիդրիխ Էբերդ
2. հիմնադրամ, Երևան 2020
3. Ն. Հոբոսյան, Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումը ֆինիայի դասավանդման գործընթացում, Երևան 2010
4. Սահակյան Վ. Ա., Համագործակցային ուսուցում: Դասավանդման մեթոդիկա Փիտական տեղեկագիր N1, 2020
5. «Քիմիա» առարկայի ուսուցչի ձեռնարկ, Երևան 2021
6. А. В. Симонян **Всероссийский журнал научных публикаций**, N1 (25), Москва 2015

<p>Հաժվեությունների կցված նյութեր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ 	
--	--